

Իրանի խորհրդարանի փոխ նախագահ Մոհամեդ Ռիզա Խաթեմի երկն շրջապատյու մը կատարեց Պալապէքի եւ Սուրի մէջ: Պալապէքի մէջ ան կատարեց յայտարարութիւններ, վերահաստատելով, որ Իրանի արտաքին քաղաքականութեան հիմնական սկզբունքն է միջամուխ չըլլալ ուրիշ պետութեանց ներքին հարցերուն, այլ անոնց հետ յարաբերութիւններ հիմնել փոխադարձ վստահութեան վրայ: «Իրանի համար շատ կարեւոր են Լիբանանի հետ յարաբերութիւնները», ըսաւ ան, ընդգծելով, որ Իրանի բոլոր ուժերը համաձայն են Լիբանանի եւ պաղեստինեան ինքնիշխան կողմին կանգնելու շուրջ: Իրանցի պաշտօնատարը ըսաւ, որ շրջանը կարիքը ունի արդար եւ ամբողջական խաղաղութեան եւ սուր հասնելու համար անհրաժեշտ է արմատախիլ ընել պատերազմներու եւ հարցերու պատճառները: Ան նաեւ ըսաւ, որ պաղեստինցի ժողովուրդը իրաւունք ունի ինքնապաշտպանութեան դիմելու:

ՄԵԹՆԻ ԵՐԵՄՓՈՒՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԿԻ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ԱՐԳԻՒՆՔՆԵՐԸ ՄԻՆՉԵՒ ՈՒՇ ԳԻՇԵՐ ՄՆԱՅԻՆ ԱՆՈՐՈՇ. ԻՐԱՔԱՆՉԻՐ ԿՈՂՄ ԻՆՔՉԻՆՔ ՀՈՉԱԿԵՑ ՅԱՂԹԱԿԱՆ, ՀԱԿԱՍԱԿԱՆ ԱՐԳԻՒՆՔՆԵՐ ՀՐԱՊԱՐԱԿԵԼՈՎ

ՄԵԹՆԻ ՇԱՅ ԸՆՏՐԱԶԱՆԳՈՒԱԾԸ ԱՅՍ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ՄԱՍՆԱԿՑԵՑԱՒ ՄԵԾ ԹԻՒՈՎ ԵՒ ՔՈՒՆԱՐԿԵՑ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՁԵՒՈՎ

ՄԵԹՆԻ ԵՐԵՄՓՈՒՆԱԿԱՆ մասնակի ընտրութիւնը երէկ մինչեւ երեկոյեան ժամը 6:00 ընթացաւ հեգասահ, հանդարտ ու խաղաղ մթնոլորտի մէջ: Սակայն, քուէատուփերու փակումէն ետք եւ երեկոյեան ժամը 8:00էն ետք, երբ սկսան յայտարարուիլ ոչ պաշտօնական առաջին արդիւնքները, որոնք եղան հակասական, մթնոլորտը սկսաւ հետզհետէ շիկանալ, իսկ կէս գիշերէն ետք, բողոքի ցոյցեր եւ արտայայտութիւններ ժրտէյտիկ ցանցապետարանին առջեւ, լարուածութիւնը հասցուցին գագաթնակէտին: Լիբանանեան բանակը եւ ներքին պահովորեան ուժերը գրահապատներով փութացին ժրտէյտէ կանխելու համար որեւէ խռովարարութիւն:

Ինչ կը վերաբերի արդիւնքներուն, ինչպէս ըսինք, մինչեւ այսօր առաւօտեան կանուխ ժամեր, տակաւին ոչինչ յստակա-

ցած էր եւ կը սպասուէր ներքին գործոց նախարարութեան պաշտօնական յայտարարութեան: Սկզբունքով երեք թեկնածուներ՝ Միքնա Մըր - Ապու Շարաֆ, Կապրիէլ Մըր եւ Ղասսան Մուխայպէր կը սպասէին արդիւնքներուն, սակայն առաջին երկուքին միջեւ է գլխաւոր պայքարը: Միքնա Մըրի ընտրական գրասենեակը շուրջ 500 քուէներու տարբերութեամբ յաղթական կը յայտարարէր, մինչ Կապրիէլ Մըրի գրասենեակը՝ շուրջ 1600 քուէի տարբերութեամբ ինքզինքը արդէն յաղթական կը հռչակէր: Սակայն, ինչպէս ըսինք, պաշտօնական ոչ մէկ յայտարարութիւն տրուեցաւ մինչեւ ուշ գիշեր եւ հակասական լուրերը մնացին տիրապետող, անորոշութեան մատնելով ժողովուրդը: Այս բոլորին մէջ, ուշագրաւ դարձաւ, որ ՄԵԹՆԻ հայութիւնը անգամ մը եւս մեծաթիւ մասնակցութիւն բերաւ ընտրութեանց, շուրջ 8500 քուէներով:

Հիւսիսային Մեթնի մէջ երեսփոխան Ալպէր Մուխայպէրի մահով թափուր մնացած յոյն ուղղափառներու երեսփոխանական աթոռին համար մասնակի ընտրութիւնները կայացան երէկ ընդհանրապէս խաղաղ, հանդարտ եւ բնականոն մթնոլորտի մէջ:

Մեթնի բոլոր շրջաններուն մէջ ապահովութեան միջոցառումները, ընդհանուր առմամբ ժողովուրդին կարգապահ մտնեցումն ու քուէարկութեան կեդրոններու պատասխանատուներուն կողմէ օրէնքներու եւ կանոններու բծախնդիր գործադրութեան նախանձախնդրութիւնը ուշադրաւ էին, հաղորդեցին դէտեր եւ լրատուամիջոցներ:

Մեթնի հայութիւնը, միասնական, ժրջան աշխատեցաւ ամբողջ օրը եւ անգամ մը եւս վճռորոշ դեր ունեցաւ քուէարկութեան արդիւնքին մէջ: Յատկապէս Հ. Յ. Դ. ակումբներ եւ ընտրական կեդրոններ կազմ ու պատրաստ հարկերաւոր տղաք առաւօտեան կանուխ ժամերէն քուէատուփեր փոխադրեցին բազմազան հայրերին, որոնք եկած էին քաղաքացիական եւ միտմանական ազգային իրենց գիտակից պարտականութիւնը կատարելու: Անոնք երէկ կարգապահ ու կազմակերպուած շարքերով կատարեցին իրենց պարտականութիւնը:

Մեր կամաւոր երիտասարդները, քուէարկելու եկած մամիկներն ու պապիկները կը բարձրացրէին ընտրական կեդրոններու երրորդ, չորրորդ յարկ՝ քուէարկութեան սենեակ, եւ ապա անոնց կ'ընկերակցէին մինչեւ տուն՝ այդ օրուան համար ապահովուած ինքնաշարժներով:

«Ամէն անգամուան նման, կրկին եկած ենք մեր ձայնը տալու Հ. Յ. Դ. նախագիտութեան զօրակցութիւնը վայելող թեկնածուներին, ըսաւ քուէարկելուց մինչեւ, իսկ ուղղորդեցին մէկը, իսկ ուրիշ մը, շեշտելէ ետք, թէ

քուէարկութիւնը քաղաքացիական պարտականութիւն է, աւելցուց. «Կը քուէարկենք՝ հետեւելով մեր ղեկավարութեան թելադրանքներուն»: Այլ կին մը նշեց. «Ես կը քուէարկեմ Հ. Յ. Դ. նախագիտութեան առաջարկած թեկնածուին, որովհետեւ գիտեմ, թէ ան կը գորակցի այն անձին, որ կը նպաստէ հայութեան շահերուն»:

Հ. Յ. Դ. նախագիտութեան ակումբները վերածուեցան մեղուի փեթակներու եւ ընտրական մեքենան աշխուժեցնելու օրուան կատարելու:



Ջարիմ Բագրատուցի՝ «Սարդարապատ» ակումբին մէջ:

նուխ ժամերէն, մինչեւ երեկոյ: Այդ աշխատանքները կատարողներուն ճաշի մատակարարումը հոգացին ԼՈՒՍ անդամները, որոնց կողքին ընտրական զանազան աշխատանքներուն իրենց եռանդուն մասնակցութիւնը բերին նաեւ Հ.Մ.Ը.Մ.ի սկստուները: Պուրճ Համուտի եւ Մեթնի հայահոծ շրջաններուն մէջ ամբողջ օրուան ընթացքին տիրող դրական եւ աշխուժ մթնոլորտը իր վրայ հրաշքաբեր լիբանանեան լրատուամիջոցներու ուշադրութիւնը:

ՆԱԽԱԳԱՏ ԼԱՄՈՒՏԻ ԶՈՒՆԱՐԿՈՒԹԻՒՆ


Հանրապետութեան նախագահ գործիչ Լաւոն Երէկ հաստատեց, որ հիւսիսային Մեթնի մէջ մասնակի երեսփոխանական ընտրութիւնները կ'ընթանան ազատ, պարկեշտ եւ բնական մթնոլորտի մէջ. ան կոչ ուղղեց մեթնցիներուն՝ ան-



Նախագահ Լաւոն կը քուէարկէ: (Լուսակարգերը՝ «ՍՅԻՏՈՒ ՕՇԵՆԱԿ»)»

աւու իրենց խիղճերուն եւ ընտրելու լաւագոյն թեկնածուն, որպէսզի ժողովը դավարական գործընթացը իր բնական տնտեսական մարտահրաւիրները, ըսաւ ան: Նախագահ Լաւոն այս յայտարարութիւնները կատարեց Պապատէթի մէջ քուէարկելէ ետք թղթակցներուն հետ իր ունեցած զրոյցին ընթացքին:

Նախագահն ու Առաջին տիկինը երէկ կէսօրէ առաջ Պապատէթի փոստ-հեռագրատան մէջ քուէարկեցին: Լուսակարգիչներուն եւ լրագրողներուն առջեւ իր քաղաքա-



«Սարդարապատ» ակումբ

ցիական պարտականութիւնը կատարելէ ետք, թղթակցներուն հետ իր ունեցած հարցազրոյցին ընթացքին, նախագահ Լաւոն վերահաստատեց, որ բանավեճներուն վերջ դնելու համար ինք ոչ միջամտած, որպէսզի ինք կարծէ, թէ ինք ընտրութիւններուն կողմնակալ միջամտութիւն ունեցած է. ան յիշեցուց, որ իր իշխանութեան առաջին օրէն յանձն առած էր լրագրողներն ու զինք քննադատողները չհետապնդել, եւ ինչպէս ըլլան ընտրութիւններուն արդիւնքները, լիբանանցիք պարտին համախումբ եւ միակամ մնալ, որպէսզի գիտազրաւեան շրջանային եւ

ՆԱԽԱՐԱՐ ԷԼԻԱՍ ՄԵՐ ԶՈՒՆԱՐԿԵՑ ԵՒ ՏՈՒՄ ՄԱՍԼՈՅ ԱՍՈՒՄՍ ՍԸ

Ներքին գործոց նախարար էլիաս Մըր քուէարկելէ ետք, թղթակցներուն հարցումներուն պատասխանելով վստահեցուց, որ ապահովական վիճակը շատ լաւ է եւ ընտրութիւնը գոհացուցիչ ընթացք մը ունի, իսկ կարեւորագոյնը՝ բոլորին ազատօրէն արտայայտուելու իրաւունքն է:

Միւս կողմէ, էլիաս Մըր երէկ առաւօտեան ժամը 10:00ին նախարարութեան կեդրոնին մէջ տուաւ մամուլի ասուլիս մը, որուն ընթացքին յայտնեց, որ երկրին մէջ ապահովութիւնը եւ հանդարտ մթնոլորտը կը մնան պահպանուած եւ քուէարկող քաղաքացիները իրենց ընտրութիւնը կը կատարեն կատարեալ ազատութեամբ եւ ժո-



«Սարդարապատ» ակումբ

ղովրդավարական կարգերով: Նախարար էլիաս Մըր երէկ ընտրութիւններուն ընթացքին մասին տուած իր մամուլի ասուլիսին մէջ ըսաւ, որ «տեղեկութիւններ ստացած, թէ ժողովը շաւիռի Բաֆֆի Մատէն տրամադիր են Պեքայէն համակիրներ բերելով Պուրճ Համուտի մէջ հարցեր ստեղծելու իրաւունքները համար ընտրութեան ընթացքը: Ասոր կողքին, տեղեկացանք, որ երեսփոխան Փիեռ Ժեմալի պիտի փորձէ որեւէ քուէարկութեան կեդրոնի մէջ հարց ստեղծելով ներկայանալ որպէս գոհ. առ այդ, բոլոր

ԼԵՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱԳԻ ԵՒ ՋԱՒԱՔԻ ՄԱՍԻՆ ԲԱՆԱԶԵՒ ՈՐԿԵՂՈՒՄ

Հ. Յ. Դ. ԼԻԻՐԱՒ ԱՆԴԱՍ ԸՆԿԵՐՎԱՐ ՄԻԶԱԶԳԱՅՆԱԿԱՆԻՆ

Շարափավորին, Բազապալանքայի մէջ (Մարոք), իր երկօրեայ աշխատանքները աւարտեց Ընկերվար Միջազգայնականի խորհուրդը: Ժողովին կը մասնակցէին կազմակերպութեան անդամ 96 կուսակցութիւններէ մօտ 450 պատուիրակներ: Հ. Յ. Դ. նախագիտութեան կողմէ ժողովին մասնակցեցան Հ. Յ. Դ. Բիւրոյի անդամ եւ Ընկերվար Միջազգայնականի (ԸՄ) մէջ Հ. Յ. Դ. ներկայացուցիչ Մարիո Նալպանտեան: Ժողովի զիջաւոր թեմաներն էին՝ «խաղաղութեան եւ անվտանգութեան յառաջխաղացք» եւ «Մոնթե-նէյք ձոնանցեակարի»:

Քննարկուած նիւթերու մասին ժողովը որոշեց համապատասխան բանաձեւեր: Թուրքիոյ մասին որոշեցուած բանաձեւ մը կը վերաբերէր թրքական ՀԱՏՏԻՔ Կուսակցութեան դէմ թրքական իշխանութեանց ծաւալած հալածանքին: Որոշեցուած բանաձեւով Ընկերվար Միջազգայնականի իր ամբողջական զօրակցութիւնը կը յայտնէ Ընկերվար Միջազգայնականի ժողովներուն իրենց հրաւիրեալ մասնակցող ՀԱՏՏԻՔ Կուսակցութեան, զայն նկատելով ժողովրդավարական կուսակցութիւն: Նատաղընի ընթացքին, Հ. Յ. Դ. պատուիրակութիւնը հանդիպումներ ունեցաւ բազմաթիւ կուսակցութիւններու ներկայացուցիչներուն, ինչպէս՝ Ընկերվար Միջազգայնականի նախագահ, Փորթուգալի վարչապետ Անթոնիո Կուլիեթսի եւ Ընկերվար Միջազգայնականի ընդհանուր քարտուղար Լուիս Ալալայի հետ:

Հ. Յ. Դ. ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՆՂԱՍԱԿՑՈՒԹԻՒՆ ԸՆԻ՝ ՄԱՐՏ 2003ԻՆ

Ընկերվար Միջազգայնականի խորհուրդը միաձայնութեամբ որոշեց դրական պատասխան տալ լիբանանցի կարգավիճակ ստանալու Հայ Յեղափոխական Դաշնակցութեան դիմումին: Ընկերվար Միջազգայնականի Ֆինանսական եւ կազմակերպական հարցերու յանձնախումբը խորհուրդի ժողովի նախօրեակին գումարուած իրենց նիստին ընթացքին որոշած էին խորհուրդին առաջարկել դրական պատասխան տալ Հ. Յ. Դ. նախագիտութեան դիմումին:

Հ. Յ. Դ. Ընկերվար Միջազգայնականի անդամ եղած է 1996ին՝ դիտորդի կարգավիճակով: 1999ին Հ. Յ. Դ. ստացաւ խորհրդակցական անդամի կարգավիճակ: Հ. Յ. Դ. լիբանանցի կարգավիճակ պիտի ստանայ Ընկերվար Միջազգայնականի Ընդհանուր ժողովին կողմէ, խորհուրդի որոշումի հաստատումով, 2003ի Մարտին:

Ընկերվար Միջազգայնականի մօտ Հ. Յ. Դ. ներկայացուցիչ Մարիո Նալպանտեան այս առիթով ըսաւ. «Լիբանանցի կարգավիճակ ստանալու կը վկայէ, թէ Հ. Յ. Դ. կը նկատուի ազդեցիկ կուսակցութիւն, որ իր դրական ներդրումը կրնայ բերել թէ՛ Հայաստանէն ներս՝ երկրին ընկերային - տնտեսական հարցերու եւ թէ՛ շրջանէն ներս առկայ խնդիրներու լուծման մէջ»: ան աւելցուց, թէ այս անդամակցութիւնը մասնաւորութիւն կու տայ Հ. Յ. Դ. ին իրենց հաւասար գործակից յարաբերութիւններ մշակել Ընկերվարական բազմաթիւ կուսակցութիւններու հետ, որոնք ազդեցիկ են միջազգային քաղաքական կեանքէն ներս:

Իր ներկայ կառուցով 1951ին կազմուած Ընկերվար Միջազգայնականի ժողովուրդն է 19րդ դարու վերջաւորութեան հիմնուած Ընկերվար Միջազգայնականին, որուն Հ. Յ. Դ. անգամակցած էր 1907ին: 1960ական թուականներուն Հ. Յ. Դ. նախագիտութիւնը վերակազմուած Ընկերվար Միջազգայնականին դարձած էր, Ընկերվար Միջազգայնականի կազմակերպական կանոններու փոփոխութեան պատճառով:

ԲԱՆԱԶԵՒ ԼԵՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱԳԻ ԵՒ ՋԱՒԱՔԻ ՄԱՍԻՆ

Յունիս 1ի իր նիստին ընթացքին, Ընկերվար Միջազգայնականի խորհուրդը որոշեց Հ. Յ. Դ. նախագիտութեան կողմէ առաջարկուած բանաձեւ մը, Հաւանական Կողմակալ խնդիրներու, յատկապէս՝ Լեոնա-յին Ղարաբաղի տագնապի եւ Ջաւախքի խնդիրն մասին: Որոշեցուած բանաձեւը, անդադառնալէ ետք շրջանային հակամարտութիւններու լուծման մէջ Ընկերվար Միջազգայնականի կարելի դրական դերակատարութեան եւ Հարաւային Կովկասի մէջ հետզհետէ անոյ յարաբերակցական - ռազմավարական գարգացումներուն, յատկապէս կ'ըսէ: «Ընկերվար Միջազգայնականը, իր կեդրոնական եւ Արեւելեան Եւրոպայի Յանձնախումբին եւ ինքնուրուիւն, ժողովրդավարութեան եւ Մարդկային Իրաւունքներ Յանձնախումբին միջոցով մտնէն պիտի հետեւին Հարաւային Կովկասի գարգացումներուն, նպաստելու շրջանային հակամարտութիւններու խաղաղ լուծման գործընթացներուն եւ յատկապէս Լեոնային Ղարաբաղի տագնապին, հիմնուած արդարութեան եւ միջազգային իրաւունքի վրայ:

Առաւել, Ընկերվար Միջազգայնականը գործի պիտի լծէ իր դրական ազդեցութիւնը՝ կանխարգիլելու առկայ հարցերու հակամարտութեան վերածուիլը: Այս ուղղութեամբ Ընկերվար Միջազգայնականը պիտի օժանդակէ միջազգային համայնքին, վրացական կառավարութեան եւ տեղւոյն ոչ - կառավարական կազմակերպութիւններուն՝ լուծելու վրաստանի Ջաւախք շրջանի հայ բնակչութեան դիմագրաւած ընկերային - տնտեսական եւ մշակութային ու քաղաքական խնդիրները:

Անդրադառնալով բանաձեւին, Մարիո Նալպանտեան ընդգծեց. «Կարեւորութեամբ կ'ուզենք շեշտել բանաձեւին Ջաւախքի վերաբերեալ պարբերութիւնը, որ նախ կը հաստատէ այնտեղ առկայ բազմաթիւ հարցերու գոյութիւնը եւ յանձնառու կ'ըլլայ դրական մտնեցումով նպաստելու անոնց լուծումին»:

ԻՍՐԱԵԼԵԱՆ ԲԱՆԱԿԸ ԳՐԱՌԻԱԾ ԿԸ ՊԱՀԷ ՆԱՊԼՈՒՍԸ

Իսրայելեան ուժերը երկ յաջորդաբար երրորդ օրն ըլլալով Այսրյորդանանի Նապլոս քաղաքը եւ անոր մտակալ Պալաքա գաղթականացի իրենց հակակշիռն տակ պահեցին, բռնարարներ գործելով, այն պատրուակով, թէ կ'ուզէ կանխարգիլել իր քաղաքներուն մէջ անճանապատեան յաւելեալ գործողութիւններ:

Ուժերը Պալաքայի մէջ խանութներու դռները պայթեցուցած են՝ փնտռելով պայթուցիկ նիւթեր:

Պաղեստինեան աղբիւրներու համաձայն, Շաբաթ գիշեր վեց ուսանողներ, որոնց կարգին չորս կիներ, ձերբակալուած են իսրայելացի զինուորներու կողմէ, որոնք ներխուժած են Նապլոսի Նաժար համալսարանի գիշերօթիկներու բաժնի:

Իսրայելեան ծայրագիտիւնը համաձայն, զինուորական աղբիւրներ յայտնած են, թէ կիներէն երկուքը անճանապատեան գործողութիւններ կը ծրագրէին:

Պաղեստինցի պաշտօնատարներ յայտնած են, որ բանակին Նապլոս եւ Պալաքա Ուրբաթ օրուան ներխուժումէն ի վեր իսրայելաւոր պաղեստինցիներ ձերբակալուած են: Մինչ այդ, Երուսաղէմի մէջ, Երուսաղէմի Միութեան արտաքին քաղաքականութեան հարցերու պատասխանատու Խալիլ Սոլամա Իսրայելի արտաքին գործոց նախարար Շիւնոն Փերեսի հետ տեսակցութեան մը ետք, երկէն քոթակիցներու յայտնած է, թէ արտաքին գործոց նախարարներու մակարդակով միջին արեւելեան խաղաղութեան խորհրդաժողով մը պէտք է «կարելի եղածին չափ շուտ կայացուի»:

Ան Յուլիսի կէտերը մշած է իրեն կարելի թուական մը՝ խորհրդաժողովին կայացման: Սակայն Փերես ըսած է, որ պաղեստինեան պետութեան մը գծով որեւէ որոշում պէտք է բանակցութեանց ճամբով գոյացած համաձայնութեան մը արդիւնքը ըլլայ:

Ան դիտել տուած է, թէ որեւէ միակողմանի դիրքորոշում կամ որեւէ փորձ՝ պարտադրուած լուծում մը ձեռք ձգելու համար, պիտի ձախողի:

(ՌՈՅԹԸՐԸ)

ԻՆՉ ԿԸ ԳՐԵՆ ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՕՐԱԹԵՐԹԵՐԸ

Տեղական մամուլի 1 Յունիսի գլխաւոր ներքին կը հանդիսանար Մեթնի մասնակի ընտրութիւնները, թեկնածուներուն վերջին կեցուածքները, արտապայտութիւնները, անոնց միջեւ եղած սուր ընտրապայքարը եւ զանազան կողմերու նախատեսութիւնները կայանալիք ընտրութիւններուն:

Ընտրապայքարի եւ ընտրութիւններու ծիրին մէջ «Ա.Ֆար» շաբաթաթերթը հարցազրոյց մը ունեցած է երիտասարդութեան եւ մարմնակրթութեան նախարար Սեպուհ Յովնանեանի հետ՝ ընտրութիւններուն առնչութեամբ շ. Յ. Դաշնակցութեան որդեգրած կեցուածքին մասին: Նախարար Յովնանեան ներկայացուցած է կուսակցութեան քաղաքականութիւնը, իստած է իրանախաղաղութեան թիւին, իրավիճակին եւ իրանախաղաղութեան կեանքի զանազան բնագաւառներու մէջ անոր ունեցած դերակատարութեան մասին: Հարցազրոյցին ընթացքին Ս. Յովնանեան նաեւ անդադարձած է Լիբանանի մարզական կեանքին եւ վերջին իրադարձութիւններուն: Արժարձուած են նաեւ երկրին տնտեսական, ընկերային եւ ապահովական կեանքը յուզող հարցեր:

«Սաֆիր» օրաթերթը կուսամասերու թիւն մը կատարած է ընտրութիւններու նախապատրաստական աշխատանքին եւ ընտրական մեքենաներուն մասին: Օրաթերթը լուսարձակի տակ առած է «Պուրճ Համուտի մէջ աշխուժող բանող շ. Յ. Դաշնակցութեան ընտրական մեքենան, որուն մէջ կը գործեն շուրջ հազար հայերիտասարդներ, կուսակցական պատասխանատուներու վերահսկողութեամբ»:

Թերթը նաեւ ակնարկած են մարտիներու Սֆէյր պատերազմին կուսակցական մեքենան հաստատուած է Պուրճ Համուտի մէջ աշխուժող բանող շ. Յ. Դաշնակցութեան ընտրական մեքենան, որուն մէջ կը գործեն շուրջ հազար հայերիտասարդներ, կուսակցական պատասխանատուներու վերահսկողութեամբ»:

ՇՆՈՐԸԱԿԱԼԻԷ

Տիկն Ենիկե Եգուպեան եւ զաւակները՝ Յակոբ եւ Հրակ շնորհակալութիւն կը յայտնեն բոլոր անոնց, որոնք անձամբ, ծաղկեպսակով, նուիրատուութեամբ եւ հեռագրով մասնակից եղան իրենց ամուսնոյն եւ հոր ԺԻՐԱՅԻ ԵԱԳՈՒՊԵԱՆԻ մահուան սուգին:

ՇԱԽՈՒ ՅԱՐԿԱԲԱԺԻՆ

●Պուրճ Համուտ, մատչելի գին: Հեռ. 01-249356 եւ 03-735023:

ԿՈՒՉՈՒԻ

●Հաստատութիւն մը իր վաճառատան համար կարիք ունի վաճառող օրինորդներու: Դիմել՝ հեռ. 01-268610:

Թերթը նաեւ ակնարկած են մարտիներու Սֆէյր պատերազմին կուսակցական մեքենան հաստատուած է Պուրճ Համուտի մէջ աշխուժող բանող շ. Յ. Դաշնակցութեան ընտրական մեքենան, որուն մէջ կը գործեն շուրջ հազար հայերիտասարդներ, կուսակցական պատասխանատուներու վերահսկողութեամբ»:

Միջազգային գետնի վրայ, թերթերը գրած են, թէ իսրայելեան ձերբակալութիւններու արշաւ մը կատարուած է եւ 100 պաղեստինցիները արգելափակուած են Նապլոսի եւ Թուրքարմի վերաբերուածէն ետք, իսկ Շարուն կը մերժէ որեւէ բանակցութիւն նախքան «ընտրութիւններու» կատարումը:

Միւս կողմէ, ըստ թերթերուն, իսրայելեան լրատուամիջոց մը ըսած է, թէ Սուրիա Հրգապալան մատակարարած է մար կատարուած փորձերուն եւ աւելցուցած է, թէ կատարական մարմիններու կողմէն՝ շ. Յ. Դաշնակցութիւնը նոյնպէս անհրաժեշտ քայլերը առած է այսպիսի անհաճոյ դէպքեր կատարելու համար: Նախարարը ըսած է, թէ այդ փորձերը պիտի ըլլան Բաֆֆի Մատենանի կողմէ, որովհետեւ ներքին իմաստով հայ երեք կուսակցութիւնները միակամ են եւ միասնաբար պիտի քուէարկեն Միւրա Մըրի:

Թերթերը նաեւ ակնարկած են մարտիներու Սֆէյր պատերազմին կուսակցական մեքենան հաստատուած է Պուրճ Համուտի մէջ աշխուժող բանող շ. Յ. Դաշնակցութեան ընտրական մեքենան, որուն մէջ կը գործեն շուրջ հազար հայերիտասարդներ, կուսակցական պատասխանատուներու վերահսկողութեամբ»:

ԸՍՏ ՍՅԵՅՐ ՊԱՏՐԻԱՐԷԻՆ

ԿԱՅ ԱՆՀԱՇԻԻ ԾԱԽՍՈՂ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆ ՄԸ ԵՒ ՀԱՅԻ ԿԱՐՕՏ ՄԵԾԱՄԱՍՆՈՒԹԻՒՆ ՄԸ

Մարտիներու Մար Նաւարալա Պուրոս Սֆէյր պատերազմը երկուսն իր քարոզչին մէջ կոչ ուղղեց ըլլալու առաքինի եւ հաւատարիմ հայրենիքին նկատմամբ: «Վետամնաց ընկերութիւններու մէջ, մասնաւոր ընտրութիւններու առեւ քուէներու եւ իրիզներու առեւ քուէներու մասին»:

Սֆէյր պատերազմը նաեւ նկատել տուաւ, որ կայ անհաշիւ ծախսեր:

**ԿԻԳԻ
ԳԱՐԱԳԱԾԵԱՆ
ԵՒ
ՏԱՃԱՏ
ԱՅՆԹԱՊԼԵԱՆ
Նշանուած
1 Յունիս 2002**

Սֆէյր պատերազմը նաեւ նկատել տուաւ, որ կայ անհաշիւ ծախսեր:

Սֆէյր պատերազմը նաեւ նկատել տուաւ, որ կայ անհաշիւ ծախսեր:

Սֆէյր պատերազմը նաեւ նկատել տուաւ, որ կայ անհաշիւ ծախսեր:

Սֆէյր պատերազմը նաեւ նկատել տուաւ, որ կայ անհաշիւ ծախսեր:

«ՔԱՅԻՏԱ» ԿԸ ԶԳՈՒՇԱՅՆԷ ՄԻԱՑԵԱԼ ՆԱՅԱՆԳՆԵՐԸ

Արաբական «Հայաթ» օրաթերթը երէկ հրատարակած է «Քայիտա»-ի մէկ բանբերին յայտարարութիւնը, ուր ան կը զգուշացնէ Մ. Նահանգները՝ այլ յարձակումի մը պատրաստուելու:

ՈՒՇԵՆԿԱԾԸՆ ՊԵՏԷ Ե ԿԱՆԽԱՐԳԻՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՊԱՏՐԱՍՏՈՒԻ

Մինչ այդ, Մ. Նահանգներու նախագահ Ճորճ Պուշ Ծաբաթ օր, առանց իրաքը նշելու, զինուորական ապագայ ղեկավարներու յայտնած է, թէ պէտք է պատրաստուել կանխարգիլող հարուածներու ձեռնարկելու «հարեկիւններու եւ բռնատէրերու» արգիլելու, որ հաւաքական քանդուածի զէնքեր ձեռք ձգեն: Նախագահը շեշտած է. «Նախընթաց չունեցող սպառնալիք մը կը դիմագրաւենք», աւելցնելով, որ վտանգը տակաւին առկայ է, «որովհետեւ գիտենք, որ հաւաքակիւնները յաւելեալ դրամ, յաւելեալ մարդ եւ յաւելեալ ծրագրեր ունին»:

Ան ըսած է, որ Մ. Նահանգներ պէտք է քողագործեն 60 եւ աւելի երկիրներու մէջ հաւաքակազմակերպութիւններ, արգիլելով Ամերիկայի թշնամիներուն, որ հաւաքական քանդուածի զէնքեր ապահովեն:

(ՌՈՅԹԸՐԸ)

ԿԻՊՐԱԿԱՆ ՀԱՐՑ

ՃԷՄ «ԿԸ ՍՊԱՌՆԱՅ» ԵՒՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ

ՆԻԿՈՍԻԱ, 2 (ՌՈՅԹԸՐԸ).— Թուրքիոյ արտաքին գործոց նախարար Իսմայիլ Ճէմ շաբաթավերջին յայտնած է, թէ Անգարայի եւ Թուրքիոյ կիպրական իշխանութիւններուն պիտի չպարտադրուի, որ կիպրոսի վերամիացման համար համաձայնութիւն մը ընդունին, հակառակ Ե. Միութեան ճնշումներուն՝ կղզիին տասնամեակներու բաժանումին վերջ տալու համար: Կիպրոսի երկու համայնքներուն ղեկավարները Յունուարին ի վեր հերթականօրէն ժողովներ կը գումարեն, սակայն ՄԱԿի զօրակցութեամբ այդ բանակցութիւնները ցարկ գրեթէ յառաջդիմութիւն չեն արձանագրած, մինչ կիպրոսի կառավարութիւնը կ'ուղղուի դէպի Ե. Միութեան անդամակցութիւն, հաւանաբար 2004ին կամ 2005ին:

ՄԱՀԱԶԴ

- Տէր եւ տիկին Արաքս Սարգիս եւ զաւակունք
- Տէր եւ տիկին Փոլ Մելիքեան
- Տէր եւ տիկին Սարգիս Սարգիս եւ զաւակունք
- Տէր եւ տիկին Գրիգոր Սարգիս եւ զաւակունք
- Տէր եւ տիկին Համարձում Սարգիս եւ զաւակունք
- Տէր եւ տիկին Թովմաս Յովնան եւ զաւակունք
- Տէր եւ տիկին Բաֆֆի Սարգիս եւ զաւակունք
- Տեմիրճեան ընտանիք
- Բէնէնեան ընտանիք
- Եւ համայն ազգականներ կը գուժեն իրենց հօր, մեծ հօր եւ հարազատին՝

ՅԱԿՈՒՔ ՍԱՐԳԻՍԻ

մահը, որ պատահեցաւ Շաբաթ, 1 Յունիս 2002, երկու ժամը 5:30ին:

Յուզարկաւորութեան արարողութիւնը պիտի կատարուի այսօր՝ Երկուշաբթի, 3 Յունիս, կէսօրէ ետք ժամը 3:00ին, Այնճարի Ս. Պօղոս եկեղեցոյ մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը պիտի փոխադրուի Այնճարի Ազգային գերեզմանատունը:

- Ներկայս ընդունիլ իբրեւ մահազո:
- Ցաւակցութիւնները պիտի ընդունուին հանգուցեալին զակիմ՝ Գրիգոր Սարգիսի բնակարանը, «Արմէնեան» շէնք, Երեքշաբթի 4 եւ Չորեքշաբթի 5 Յունիսին:

ՄԱՀԱԶԴ

- Տիր Առաքել Միքայէլեան
- Տէր եւ տիկին Արշակ Միքայէլեան եւ զաւակունք
- Տէր եւ տիկին Լեւոն Միքայէլեան եւ զաւակունք
- Տիկին Վարդուհի Միքայէլեան (Պատուուչ) եւ զաւակունք

- Տիկին Մարի Տէտեան
- Տէր եւ տիկին Խաչիկ Տէտեան եւ զաւակունք
- Տէր եւ տիկին Շիրազ Տէտեան եւ զաւակունք
- Հանր Յակոբեան ընտանիք
- Ուսանեան ընտանիք
- Թոնպազեան ընտանիք
- Շիրինեան ընտանիք
- Եւ համայն ազգականներ կը գուժեն իրենց մօր, մեծ մօր եւ հարազատին՝

ԱՐԵՂԱԶ ՄԻԶԱՅԷԼԵԱՆԻ (Ծնեալ՝ 1910ին)

մահը, որ պատահեցաւ Կիրակի, 2 Յունիս 2002, կէսօրուան ժամը 12:00ին:

Յուզարկաւորութեան արարողութիւնը պիտի կատարուի այսօր՝ Երկուշաբթի, 3 Յունիս, կէսօրէ առաջ ժամը 11:00ին, Նոր Ատանա թաղի Ս. Աստուծածաճին եկեղեցոյ մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը պիտի փոխադրուի Պուրճ Համուտի Ազգային գերեզմանատունը:

- Ներկայս ընդունիլ իբրեւ մահազո:
- Ցաւակցութիւնները կ'ընդունուին հանգուցեալին բնակարանը, Թրատ թաղ, Երկուշաբթի 3 Յունիսին:

ՄԱՅԻՍԵԱՆ ՓԱՌԱՏՕՒ

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԱՐԱՄ Ա. ՎԵՐԱՓԱՌԻ (Կաթողիկոս Սեօի Տանն Կիլիկիոյ)

Նախագահութեամբ՝ ԳԵՐՇ. Տ. ԳԵՂԱՄ ԵՊՍ. ԽԱՉԵՐԵԱՆԻ (Բարեջան Առաջնորդ Լիբանանի Եպիսկոպոս)

Կազմակերպութեամբ՝ Հ. Մ. Ը. Մ. Ի ԼԻԲԱՆԱՆԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

Տեղի կ'ունենայ Կիրակի, 9 Յունիս 2002ի երեկոյեան ժամը 6:00ԵՍ սկսեալ, Պուրճ Համուտի Բաղաքապետարանի դաշտին վրայ:

**365 ՕՐԵՐԷՆ ՕՐ ՄԸ
ՀԱՅ ԾԵՐԱՆՈՅԻՆ**

Սոյն ձեռնարկին հետեւեալ ազգայինները կը ստանան օրուան մը ճաշի ծախսը՝ 300 տոլարով:

Պետրոս եւ Լիմա Պողոսի Մէյլալեաններու զաւակները, իրենց ճողոպ մահուան Տրո տարելիցին առիթով:

Ընդ բարձր հովանաւորութեամբ
**Ն. Ս. Օ. Տ. Տ. ԱՐԱՄ Ա.
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ**
Եւ նախագահութեամբ
**ՏԵՐ ԵՒ ՏԻԿԻՆ ԳՐԻԳՈՐ
ԵՒ ՍԻԻՉԻ ԾՈՒԺՈՒՆԵԱՆԻ**

**ՇՈՒԳԵՒՈՐ ԳԵՂԱՐՈՒԹԵԱՆ
ՎԱՍԵՐԳ**

Կը մենքդ աշխարհածաճօթ սովորացօ
ԻԶԱՊԵԼ ՊԱՅՐԱԳՏԱՐԵԱՆ
Լարային նուազախումբը կը վարէ՝
**ԳԵՐՊ. Տ. ՄԵՂՐԻԿ
Ծ. ՎՐԴ. ԲԱՐԻԷԱՆ**
Կազմակերպութեամբ
**ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ
ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ
ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԳԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ
ԲԱՄԱՆՄԱՌԻՔԻՆ**

Երեքշաբթի, 4 Յունիս 2002, երեկոյեան ժամը 8:00ին, կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ:

ՍՈՒՏԸՆ ԱԶՍ

ՏԱՐԵՂԱՐՉԻ ԼԱԻԱԳՈՅՆ ՆՈՒԵՐ

**VIDEOԻ ԿԱՍ ԸԾԻ ՎՐԱՅ
VIDEO CLIPՆԵՐ**

ԱՆՁԻ ԱՆՈՒՆՈԿ ԵՒ ՄԱԿԱՆՈՒՆՈԿ

Դիմել՝ ԱՐԱ ԶԷԶԵԾԱՆ ՀԱՍ.
Հեռ. 01 / 261696, 03 / 250518

ԵՐԿԱՐԱԶԳՈՒԿՈՒԾ

**ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ
ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԻ
50% ԶԵՂՉ ԿԱՃԱՌԸ
ԵՐԿԱՐԱԶԳՈՒԿՈՒԾ Ե ՄԻՆՉԻԹ**

12 ՅՈՒՆԻՍ 2002

ՄԵԹՆԻ ԵՐԵՍՓՈՒՆԱՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԿԻ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ԱՐԴԻՒՆՔՆԵՐԸ...

Շարունակում Ա. Էջեմ

քուէարկողներուն ապահովութիւնը երաշխաւորելու համար, ապահովական ուժերու աւելի զգալի բայց նաեւ քաղաքակիրթ ներկայութիւն կայ յատկապէս Պուրճ Համուտի մէջ»:

կը նպատակադրէ ժողովուրդին արժանապատուութիւնը գնելու եւ ընկերային դիրքակից իրավիճակին հետ խաղալ:

Ակնարկելով «Նահար» օրաթերթի այն տեղեկութեան, որ ներքին գործոց նախարարը անկարող է անկողմնակալ դիրք բռնել, նկատի ունենալով Մեթնի մէջ իր հօր դէմ ծառայող սպանալիքներուն, նախարարը թղթակիցներուն ըսաւ. «Ներքին գործոց նախարար»



Մետրոպէան վարժարանին առջեւ

թեմը բարձրացած աղմուկին, նախարար

ՄԹՆՈՒՆՐՏԸ ԸՆՏՐՈՒՄ ԵՐ. ԿԸՄԵ ՄԻՐՆԱ ՍԸՐ

Թեկնածու Միրնա Մըր քուէարկեց եւ հաստատեց, որ ընտրութիւնները ընթացան խաղաղ եւ հանդարտ մթնոլորտի մէջ:

Ան այցելեց տարբեր շրջաններու քուէարկութեան կեդրոններ, եւ ըսաւ, որ «մթնոլորտը շատ բնական եւ հանդարտ է. իսկ եթէ անոնք կ'ուզեն կիրքեր հրահրել, ապա ատիկա իրենց գիտնալիքն

է»:
Քուէարկութեան վարագոյրին գծով բողոքներուն մասին ան ըսաւ, որ «անոնք կը պոռան, կը կանչեն, բայց մենք պիտի չպատասխանենք»:

ՔԱՐԻՍ ԲԱԳՐԱՏՈՒՄ ԲՈՒՆԱՐԿԵՑ ՊՈՒՐՃ ՀԱՄՈՒՏԻ ՄԷՋ

Փաղանգաւոր Կուսակցութեան նախագահ Քարիմ Բագրատունի երէկ շրջապտոյտ մը կատարեց ընտրական կեդրոններ:



«Արագած» ակումբ


ներ, քուէարկեց Պուրճ Համուտի մէջ, ապա

կը ներկայացնենք ապագային հաշտութեան ուղեգիծը, մինչ անոնք կը ներկայացրնեն բախտախաղի եւ արկածախնդրութեան ուղեգիծը»:

ՂԱՍԱՆ ՄՈՒՆԱՅՊԵՐԻ ԿԵՅՈՒՄԵՐԸ

Թեկնածու Ղասան Մուխայպեր Պէյթ Մերիի մէջ քուէարկելէ ետք, թղթակիցներուն խօսելով ըսաւ. «Ժողովուրդը տարուած է, որովհետեւ «Է.մ. Թ.ի. Վ.ի.» պատկերասփիւռի կայանը եւ այլ կողմեր շատ ապուր ընտրական արշաւ մղեցին. մենք պատկերասփիւռի կայան չունէինք. մեծ գումարներ չունէինք, կը հաւատանք ժողովրդավարութեան, ժողովուրդին, կը հաւատանք, որ իւրաքանչիւրը

Շար.՝ Էջ 10



Լ. եւ Սոֆիա Յակոբեան վարժարանին մէջ



«Նիկոլ Դուման» ակումբ



«Ազիրեան» ակումբ

թիւնները, գերագոյն ատենանի համաձայնութեանն է եւ: «Ետեւար, Երկուշաբթի օր, բոլոր անոնք դէմ դատեր պիտի բացուին: Անձամբ այս արարքը կը սեպենք քրէական, որովհետեւ

րութեան մէջ եւ օրէնքները կը գործադրեն եւ ամենայն հանդարտութեամբ կը հսկեն ընտրական աշխատանքին»:
Անդրադառնալով «վարագոյր»ին ետեւ քուէարկելու առնչու-

Մըր շեշտեց, որ քաղաքացին ապառ է իր կարծիքը յայտնելու կատարեալ ապատուութեամբ, ըլլա՛յ իրապարակաւ, ըլլա՛յ «վարագոյր»ի ետեւէն, սակայն օրէնքին համաձայն՝ անհրաժեշտ է «վարագոյր»ին գոյութիւնը, բայցեւայնպէս չենք կրնար ուժ բանեցնել ժողովուրդին վրայ եւ ստիպել քուէարկողին, որ «վարագոյր»ին ետեւ անցնի:



«Թէհլիրեան» ակումբ

այցելեց Հ. Յ. Դ. «Սարդարապատ» ակումբը:
«Սարդարապատ» ակումբին մէջ կատարած իր յայտարարութեան մէջ ան ըսաւ. «Հ. Յ. Դաշնակցութեան, Փաղանգաւոր Կուսակցութեան եւ երեսփոխան Միշել Մըրի միջեւ դաշինքը հին եւ սկզբունքային է. մենք

ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԲՈՒՆԷՃ
(«Մեքսիք» փողոց, հեռ. 349816)
2002 - 2003 տարեշրջան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- 1.- 2002 - 2003 տարեշրջանին Հայ Աւետարանական քուէնք պիտի ունենայ բողոքըն 12րդ պաշարտա դասարան:
- 2.- 2002 - 2003 տարեշրջանի նախնական արձանագրութիւնները սկսած են հին եւ նորեկ աշակերտներու համար:
- 3.- Ընթացիկ կրթական տարեշրջանի աշակերտները պարտին իրենց նախնական արձանագրութիւնները կատարել մինչեւ 28 Յունիս 2002:
- 4.- Նորեկ աշակերտներու դիմումագրիւնները կ'ընդունուին ամեն օր Երկուշաբթիէն Ուրբաթ, կէսօրէ առաջ 9:30էն 12:30:
- 5.- Կրթանպաստի դիւրութիւնները կը տրուին ուսումնապէս փայլուն եւ նիւթական դժուարութիւն ունեցող աշակերտներու:
- 6.- Բոլոր շրջաններու համար **օթոպիւտի** սպասարկութիւնը ապահովուած է:

ՏՆՕՐԵՆՈՒԹԻՒՆ

ONE SECOND IS ENOUGH...
Արկածը կը Պատահի Երկուրեւեւ Մը Մէջ...

...BUT WE USE THEM ALL.
...ԻՍԿ ՄԵՆԵ ՆԵՐԿԱՅ ԵՆԵ ԱՄԷՆ ԵՐԿՎԱՅՐԿԱՆ.

ԱՖՏԻԼ AFHIL

Աֆիլ-ի Հէնք, Ք. Յարկ, Գեո. եւ Շաքս. (01) 262231-242556-242557
Imm. AFED, 2ème étage, Tél. and Fax: (01) 262231-242556-242557

igloo Ets. Avo Soulahian

Family 34,0 L Combo

1 34,0L
2 3,8L
3 1,0L

Exclusive Agent Ets.Avo Soulahian Tel: 01 - 691526

National
THE PEAK OF JAPANESE TECHNOLOGY

Solar Refreshing Filter
This long-lasting solar refreshing charcoal filter absorbs tobacco smoke and other contaminants that can cause room odors.

Catechin Filter
Catechin plant is well known for its medicinal effects against: Cancer, virus, allergy, cholera, flu, and dust particles.

NEW DESIGN 2002

Luminous Remote Controller

For more info, call: Tutunjian Corp. S.A. (04) 712129/130 - 711967, (03) 243203 Fax: (04) 712177 E-mail: TTC@cyberia.net.lb

IGOL
MOTOR OIL

FUEL CARD

ԳՈՐԾԱԾԵՑԷՔ FUEL CARDԸ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԾՐԱԳԻՐՆԵՐՈՒ ՅԱԶՈՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Յաւելեալ մանրամասնութեանց համար հեռաձայնել՝ 01-242556 թիւին:

ՄԱՅԻՍ 28Ի ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԱՅՆՃԱՐԻ ՄԷՋ

Այս տարի Այն-ճարի մէջ Մայիս 28ի տօնակատարութիւնը յատկանշուած է շ.Մ.Լ.Մ.ի Այն-ճարի փողերախումբին ընկերակցութեամբ համաժողովրդային քայլարշաւով: Մեկնելով շ.Մ.Լ.Մ. Այնճարի ֆուտբոլի դաշտէն՝ շ.Մ.Լ.Մ.ի փողերախումբը եւ սկսեցին կանոնաւոր շարքեր ժողովուրդը առջնորդեցին Այնճարի լայն պողոտաներէն՝ հասնելով մինչեւ Ս. Պօղոս եկեղեցի, որուն «Գալուստ Կիւլպինկեան» սրահին մէջ տեղի պիտի ունենար պաշտօնական հանդիսութիւնը եւ ապա ազգային-յեղափոխական երգերու երգահանդէսը:



Յակոբ Հաւաթեան կը փոխանցէ օրուան պատգամը:

Պաշտօնական հանդիսութիւնը սկսաւ ժամը 20:00ին, ներկայութեամբ Այնճարի քաղաքապետ Սեպուհ Սպալեանի, գիւղի հոգեւոր պետերուն, պատ-



Քայլարշաւէն տեսարան մը:

կան մարմիններու ներկայացուցիչներուն եւ մեծ թիւով այնճարցիներուն:

Լիբանանի եւ Հայաստանի քայլերգներուն ունկնդրութիւնն էր, շ. Մ. Այնճարի «Կարմիր Լեռ» կոմիտէի դաստիարակչական մարմինին անուսով բացման խօսքը կատարեց տղայ Փանոս Թաւազեան, որմէ ետք բեմ հրաւիրուեցաւ, շ. Յ. Գ. Լիբանանի Կեդրոնական կոմիտէի անդամ Յակոբ Հաւաթեան՝ օրուան պատգամը փոխանցելու համար: Անդրադառնալով հայոց պատմութեան սեւ էջերուն, ինը դարերու ստրկութեան, որոնց ընթացքին հայ ժողովուրդը կորսնցուց իր պետականութիւնը, անկախութիւնը, հողերը եւ բազմիցս բռնազաղթի եւ ջարդի ենթարկուելով գրեթէ կորսնցուց իր դիմազին ու ինքնութիւնը, բանաստեղծ զիտի տուաւ, որ Անկախ



Ներկայացուցիչներու մաս մը:

Հանրապետութեան կերտումը եղաւ իսկական յաղթանակ եւ ազգային դիմազին վերականգնումի սկիզբ:

Ան աւելցուց, որ եթէ չըլլար 28 Մայիսը, կարելի պիտի չըլլար վերահաստատել այսօրուան անկախութիւնը, ինչպէս նաեւ կարելի պիտի չըլլար ազատագրել Արցախը կամ համաշխարհային բնոյթ տալ հայկական պահանջատիրութեան:

Յ. Հաւաթեան եզրափակեց՝ ըսելով, որ «հայր մէկ է եւ այդպէս ալ պիտի մնայ», շեշտելով Հայաստան-Սփիւռք համագործակցութեան կարեւորութիւնը՝ իբրեւ պատմական անհրաժեշտութիւն:

Բանաստեղծներէն ետք յաջորդաբար բեմ հրաւիրուեցան լիբանանահայ երգիչներ կարօ Կապուտակեան եւ Վիգէն Տիշէճէճեան՝ ընկերակցութեամբ խաչիկ Սալախեանի եւ իր նուագախումբին, անոնք մտնելով ժամ ազգային-յեղափոխական երգեր հնչեցնելով խանդավառ մթնոլորտ ստեղծեցին սրահին մէջ:

ՀՕՄԻ ԿԵԳՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՏԵՆԱՊԵՏ ՄԱՐՕ ՄԻՆԱՍԵԱՆԻ ՀԵՏ ՀԱՐՅԱԶՐՈՅՅԻ ԸՆԹԱՅՔԻՆ ԱՆ ԸՍԱԻ

«ՀՕՄԻ ԳԼԽԱԲՈՐ ՆՊԱՏԱԿՆԵՐԷՆ Է ՀԱՅ ԸՆՏԱՆԻՔՆԵՐՈՒՆ ՕԺԱՆԳԱԿԵԼ, ՄԻՆՉԵՒ ՈՐ ԱՆՈՆՔ ԻՆՔՆԱԲԱԻ ԸԼԼԱՆ ԵՒ ԿԱՐԵՆԱՆ ԱՌԱՆՁԻՆ ԳՈՅԱՏԵԻԷԼ ԵՒ ՇԱՐՈՒՆԱԿԵԼ ԵՐԹԸ»

«Ա.Չ.Գ.Ա.Կ.»- ՀՕՄը ծրագրեր կ'իրականացնէ Հայաստանի, Արցախի, վերջերս Ջաւախքի եւ Սփիւռքի մէջ: Ի՞նչպէս կը մշակուին անոնք եւ ի՞նչ է անոնց իրականացման գործընթացը:

ՄԱՐՕ ՄԻՆԱՍԵԱՆ.- Ծրագրերը մշակուելէն եւ գործադրութեան անցնելէն առաջ կայ նախապատրաստական աշխատանքի բաժին մը: Որեւէ տեղ, ուր ՀՕՄը կը ծրագրէ աշխատանքներ տանել, հոն կը յառաջանէ միաւոր մը, կորիզ մը, որ չափազանց անհրաժեշտ է ծրագրերը մշակման եւ անոնց ճշգրիտ գործադրութեան համար: Այս միաւորին ստեղծման գլխաւոր նպատակը այն է, որ մենք որքան ալ սերտենք շրջանի պահանջները, տարիներ շարունակ հոն ապրողը աւելի լաւ գիտէ, թէ շրջանը եւ անոր բնակչութիւնը, որուն մաս կը կազմէ ինք, ինչ բանի կարիք ունի, ինչ են առաջնահերթութիւնները անոր համար եւ ինչ մարզի մէջ օժանդակութեան ձեռք երկարելով կարելի պիտի ըլլայ աւելի լաւ ու օգտակար ծրագրեր մշակել եւ այլն: Կայ նաեւ այն իրողութիւնը, որ անիմաստ է որեւէ պարագայի որեւէ ծրագիր մշակել առանց կարիքները եւ անհրաժեշտութիւնները սերտելու, օրինակ՝ ապարդիւն պիտի ըլլայ լաւ կրթութիւն ապահովել այն մանուկին, որ կարիք ունի չոր հացի, այս չի նշանակեր, որ կրթութիւնը կարեւոր չէ, սակայն գոյութեան ապահովումը աւելի կարեւոր է: Կայ զգո՞ղման մը եւս. ժամանակի ընթացքին մարդոց կարիքները կը փոխուին եւ անոնց համաձայն, պէտք է բարեփոխուին նաեւ ծրագրերը, որովհետեւ վերջապէս անոնք մշակուած են օգնելու համար բնակիչներուն եւ ապրողներէն օգնել անոնց այն ծիրին մէջ, ուր իրենք արդէն բաւարարուած են: Օրինակ՝ 1988ի երկրաշարժէն ետք Աղէտեալ գօտիին մէջ կար սննդեղէնի, հանդերձանքի եւ ապաստանարանի սաստիկ կարիք, ՀՕՄը այդ ժամանակաշրջանին եւ յառաջիկայ տարիներուն այդ ծիրին մէջ աշխատեց աշխատանք տարաւ, սակայն այսօր այդ տարրական պայմանները ապահովուած են եւ շրջանին մէջ այլ կարիքներ կան, որոնց համար այլ ծրագրեր պէտք են: Այս է պատճառը, որ թէ՛ Հայաստանի, թէ՛ Արցախի եւ թէ՛ Ջաւախքի մէջ ընդհանրապէս ծրագրերու առաջարկները կու գան շրջանի բնակիչներէն, մեր Առաջնորդ ճամբով ուսումնասիրութիւններ տեղի կ'ունենան, առաջարկներ կը ներկայացուին, ՀՕՄի Կեդրոնական Վարչութիւնը կը սերտէ գանձեր եւ եթէ անոնք կը համընկնին ՀՕՄի ընտրած ուղիին, իր աշխատանքային ծիրին մէջ կ'իյնան եւ կարելիութիւններ կան գանձեր իրականացնելու նիւթական եւ բարոյական իմաստով, Կեդրոնական Վարչութիւնը կը վաւերացնէ եւ կը սկսի աշխատանքի: Նշենք, թէ Հայաստանի եւ Արցախի մէջ այդ հանգրուանները շատոնց անցան. Հայաստանի մէջ ուսումնասիրութիւնները ցոյց տուին, թէ հոն կան շատ մեծ թիւով որբեր, որոնք անխնամ եւ լքեալ վիճակի մէջ են, այդ պատճառով մենք սկսանք որբերու հոգաարութեան ծրագրերին, մեծ հարց էր նաեւ մանուկներու եւ յղի կիներու խնամատիրութեան չզոյուցելը եւ այդ պատճառով արձանագրուած մահերը, որուն լուծումը եղաւ ՀՕՄի «Մօր եւ Մանկան Կեդրոն»ի ստեղծումը: Արցախի պարագային զգալի էր մանկապարտէզներու կարիքը, որուն գոհացում տուաւ ՀՕՄը: Ջաւախքի մէջ այս աշխատանքներուն համար յառաջանալով ՀՕՄի միաւորի հիմքը կազմող խումբ մը, որ զբաղեցաւ շրջանի բնակիչներու կարիքներուն ուսումնասիրութեամբ եւ այսօր այդ հանգրուանը արդէն աւարտած է եւ աշխատանքները սկսած են: Պէտք չէ մոռնալ նաև, որ ՀՕՄը միայն ու միայն բարեփոխական ծրագրեր չ'իրականացներ, այլ կրթական, առողջապահական եւ տնտեսական:

որողական եւ իբրեւ արհեստից վարժարան, ուր կրնան յաճախել թէ՛ սկսնակ եւ թէ՛ աւելի մեծ տարիքով հայ աշակերտներ:

Առողջապահական ծիրին մէջ մեր նպատակն է քանի մը կեդրոններու մէջ բուժարաններ հիմնել, ուր կարելի պիտի ըլլայ արտաճանաչումներ եւ տարրալուծարանային սպասարկութիւններ կատարել, շտապ օգնութեան հասնել, որովհետեւ այս բնագաւառին մէջ տեղական բժշկական կեդրոններուն վիճակը շատ նախնական է:

Կան նաեւ տնտեսական ծրագրեր, հայ աշխատաւորներուն յատուկ մեքենաներ եւ սարքեր տրամադրելու իմաստով եւ արդէն կարգ մը ընտանիքներ օժտուած են արդիական հողագործական մեքենաներով, որպէսզի անոնց գործը բարգաւաճի եւ իրենց վիճակը բարելաւուի:

«Ա.»- Ջանգաճ շրջաններու մէջ ծրագրերու իրագործման ընթացքին ի՞նչ պիտար զօժարուցիչներու կը հանդիպիք եւ ի՞նչ ձեւի գործակցութիւններ կը կատարէք ու կապեր կը հաստատէք:

Մ. Մ. - Մենք ընդհանրապէս նախքան որեւէ աշխատանքի սկսիլը, կապ կը հաստատենք տեղական կառավարական մարմիններուն հետ: Ջաւախքի պարագային կառավարութեան դիմում ներկայացուցինք՝ իբրեւ միջազգային կազմակերպութիւն շրջանին մէջ գրասենեակ մը ունենալու համար: Այդ գծով արտօնութիւնը ստացանք եւ մօտերս գրասենեակին բացումը տեղի պիտի ունենայ: Միւս ծրագրերու պարագային զխաւոր պայմանը այն է, որ անոնք ամբողջացրեն կառավարական պայմանները: Հայաստանի մէջ եւս որեւէ մեծ քայլի պարագային անմիջական կապ կը հաստատենք եւ կը գործակցին կառավարութեան հետ:

Այլ զօժարուցիչներու կարգին կրնանք յիշել, թէ բաւական ժամանակ եւ աշխատանք կ'ենթադրէ շրջաններու մէջ տուեալները համարելու ու վիճակագրութիւններ կատարելը: Ասոր կողքին կայ նաեւ այն իրողութիւնը, որ երբ նոր շրջան մը կը մտնենք, մեզի հիմար հիմնական հարց է աշխատանքի կարծրանման համար յարմար անձեր գտնելը եւ մեր գործունէութիւնն ու աշխատեցնելը բնակիչներուն կողմէ ընդունելի դարձնելը: Խորքին մէջ մեր գործունէութիւնը նորը ծախքեր ունի, որովհետեւ ուրիշին օժանդակելը կրնայ զգացական կապութիւններ ստեղծել: Այդ պատճառով, միշտ զգուշ կ'ըլլանք, մանաւանդ առաջին շրջանին, որպէսզի ոչ ոք գէշ կամ մեզմէ կ'ախտակուի, որ պիտի զայ օրը, երբ անմեծ օժանդակութիւն ստացող ընտանիք ինքնաբաւ զգայ եւ կարենայ առանձին գոյատեւել եւ յարատեւել: Այսինքն՝ ՀՕՄի օժանդակութիւնը պէտք է օգնէ, որ ընտանիք մը լաւ վիճակի հասնի, իր կարիքները հոգայ, որպէսզի միութիւնը կարենայ այլ ընտանիքներու օգնել, որովհետեւ վերջապէս մեր կարելիութիւններն այ սահմանափակ են:

Այս իրողութեան մասին խօսիլը դիւրին է խորքին մէջ, սակայն դժուար է գործադրելը, որովհետեւ անիկ կը պահանջէ սերունդներու եւ մտայնութիւններու փոփոխութիւն:

«Ա.»- Դուք ըսիք, թէ հայութեան կարիքներուն եւ անհրաժեշտութիւններուն մասին տուեալները կու գան երկրի բնակչուցէն: Արդե՞ք Հայաստանէն եւ Արցախէն կ'ա՞ն առաջարկներ, որոնք ՀՕՄը չէ կրնայ իրագործել, սակայն կարիքներ ըլլալէ չեն զաղորդի:

Մ. Մ. - Ծրաններուն, մանաւանդ Հայաստանի մէջ, բարեփոխական կազմակերպութիւններն ու անոնց գործունէութիւնը շատ-շատ քիչ են: Կարիքները հոգայ, որպէսզի միութիւնը կարենայ այլ ընտանիքներու օգնել, որովհետեւ վերջապէս մեր կարելիութիւններն այ սահմանափակ են: Ասոր կողքին կայ այն իրողութիւնը, թէ մենք ունինք մեր ուղին, մեր սկսած ծրագրերը, որոնք կէս ձգելով չենք կրնայ նոր աշխատանքներու սկսիլ: Մենք ամէն շաբաթ կը թափենք մեր ծրագրերը իրենց լրումին հասցնելու, օրինակ՝ մեր որբերու հոգաարութեան ծրագրերին մէջ արդէն ունինք մեծ թիւով որբեր, սակայն ասոր կողքին տակաւին կան շուրջ 2 հազար որբեր, որոնք խնամքի կը կարօտին, մենք աշխատանք կը տանինք անոնց բարեբար ապահովելու: Կայ նաեւ այն պարագան, որ երբեմն բարեբարները կը դադրին օժանդակելէն եւ մենք այդ մանուկներուն եւս նոր բարեբար պէտք է գտնենք: Ունինք կրթական ապահով ծրագրեր եւ եթէ այդ ծիրին մէջ նիւթական ներդրումները աւելցնենք, այն ստան աւելի մեծ թիւով մանուկներու ու-



սում ապահոված կ'ըլլանք: Այսինքն՝ կ'ուզեմ ըսել, թէ կարելի չէ նոր ծրագրի սկսիլ, եթէ նիւթական եւ բարոյական առումով մեր միւս ծրագրերը իրենց լրումին, գազաթին չեն հասած: Այնքան ատեն որ Հայաստանի որբերուն թիւը չէ նուազած եւ բոլորը լաւ ուսում ու կրթութիւն չեն առած մեր որբերու հոգաարութեան ծրագրեր չի կրնար կանգ առնել, այնքան ատեն որ «Մօր եւ Մանկան Առողջապահական Կեդրոն»ը ամբողջովին չէ սարքաւորուած, անոր զարգացումը չի կրնար կիսատ մնալ:

Նոր ծրագրեր կրնանք համարել Հայաստանի մէջ ՀՕՄի տնտեսական ծրագրերները: Մենք անցեալ շրջանին պրպտումներ ըրինք եւ հող գտանք, որովհետեւ նպատակները այսօր ընդհանրապէս բարեփոխական ուղղուածութիւն չունին, այլ կը միտին ժողովուրդները ինքնաբաւ դարձնել, այսինքն՝ անոնց առողջութիւնը, կեցութեան պայմանները եւ ուսում ապահովել, որպէսզի անկէ ետք իրենք շարունակեն իրենց կեանքի ուղին: Ծրագրերու իրագործման համար բարեբարներու ներդրած գումարներն այլ կը դրուին տնտեսական եւ կրթական ծիրին մէջ եղող աշխատանքներուն համար: Տնտեսական ծրագրերուն մէջ նկատուի ունիք անասնաբուծութիւնը, կաթնեղէնի արտադրութիւնը, խոզերու խնամքը, կարի աշխատանքներու հիմնումը եւ մեղրաբուծութիւնը: Հայաստանի մէջ 5 ծրագրեր իրականացած են արդէն եւ լաւ արդիւնքներ տուած ու այդ պատճառով ներդրուած գումարներու ժամանակաշրջանը երկարաձգուած է եւ նոյնիսկ կարելիութիւնը ունինք գանձելու զարգացրելու եւ ընդլայնելու: Աստիճակով կ'իրագործուին Երեւանէն դուրս՝ Արմաշի, Վանայ Զորի, Գիւմրիի, Էջմիածինի շրջակայ վայրերու եւ այլ շրջաններու մէջ:

«Ա.»- ՀՕՄի աշխատանքներուն ծանօթեցնելու ընթացքին, սակայն արտաքին քարոզչութեան իմաստով ի՞նչ աշխատանք կը տարուի:

Մ. Մ. - Հայ մամուլը դիւրութեամբ եւ յաճախ կ'արձագանգէ ՀՕՄի աշխատանքներուն, սակայն հարց մեր ծրագրերը օտարներուն ծանօթացնելն է եւ այս մէջը կ'ենթադրէ, որ մենք բացուիք արտաքին աշխարհին եւ ասոր համար կարիք կայ նոր գործիքներ, որոնք արդեւորման, որ նաեւ քիչ մը հարց է: Պէտք է նկատուին նաեւ, թէ ՀՕՄի եւ իր միաւորներուն աշխատանքներն կ'օգտուին ոչ միայն հայերը, այլեւ՝ օտարները եւս:

Քարոզչութեան իմաստով վերջին չորս տարիներուն ընթացքին հայերէնով եւ անգլերէնով պրակներ կրցանք հրատարակել՝ ՀՕՄի 90ամեակին առիթով եւ Հայաստանի որբերու հոգաարութեան ծրագրի առնչութեամբ, հրատարակեցինք նաեւ ՀՕՄի պատմութեան, գործունէութեան եւ ներկայ աշխատանքներուն վերաբերող այլ գրքով մը: Բայց այս ծիրին մէջ նիւթական հարցեր ունինք, կայ նաեւ թարգմանելու եւ ծրագրի գործնականացման հարցը: Տեղեկութիւնները պէտք է 5 լեզուներու թարգմանուին եւ այս առումով կան որոշ աշխատանքներ, եթէ ոչ կեդրոնական, այլ շրջանային գեների վրայ: Կան շրջաններ, որոնք աշխուժ աշխատանք կը տանին եւ երիտասարդ ուժեր ստանձնած են թարգմանելու եւ պրակներ պատրաստելու պատասխանատուութիւն, մանաւանդ որ երիտասարդները աւելի հետաքրքրուած են արհեստագիտութեամբ եւ նորութիւններով:

«Ա.»- ՀՕՄի կառուցողի մէջ երիտասարդներու թիւը ի՞նչ համեմատութիւն կը կազմի:


Մ. Մ. - Անիկ կախեալ է շրջաններէն, չենք կրնար շատ յստակ տուեալներ տալ: այն շրջանները, ուր կ'ունենան համար աշխատանքը անհրաժեշտ, առաջնակարգ չէ, հոն

Հարցազրույց վարեց Ն. ԱՐՄՍԵՎԵԱՆ

ՀԱՍԲԻԿ ՍԱՍՈՒՆԵԱՆԻ ՀԱՍՅԵՆ
HAMPPIG SASSOUNIAN
CSP - L.A.C. B - 5 - 131 44750
60-TH ST. WEST LANCASTER,
CA, 93536 USA

Մշակութային Էջ

ՇՆՈՐՀԱԼԻ ԵՌԵԱԿ ՄԸ



«Երազողը», գործ՝ Մարիա Պոյաձեանի: «Մարդկային քաղաքակրթութիւն», գործ՝ Իրա Պալթայեանի: «Երածչտուրիւն», գործ՝ Շահէ Տէր Յարութիւնեանի:

Արուեստագէտներ կան, որոնք իրենց չունեցածն իսկ ցուցադրելու եւ արժեւորելու շնորհը ունին: Այս տեսակները թէեւ կարճ ժամանակի մէջ համարելի կը տիրանան ու կը դառնան ժողովրդական դէմքեր, սակայն ընդհանրապէս ժամանակի ընթացքին անոնց արուեստը կը խամրի իրենց հետ խունացնելով նաեւ անոնց արուեստագէտի վարկն ու անունը:

Կան նաեւ ուրիշներ, որոնք թէեւ օժտուած կ'ըլլան ընդոճին կարողութիւններով, սակայն յաճախ անոնց բարձրարժեք ստեղծագործութիւնները (առնուազն ժամանակ մը) կը մնան շուքի մէջ՝ իրենց համեստ բնակարաններէն պատճառով: Այս վերջին տեսակի արուեստագէտներու շարքին կը պատկանին Իրա Պալթայեանը, Մարիա Պոյաձեանն ու Շահէ Տէր Յարութիւնեանը: Երբեք ալ վարպետ գեղանկարիչներ են, սակայն զօրախտաբար այնքան ալ ծանօթ չեն գեղարուեստաւոր հասարակութեան: Անոնք քով - քովի գալով կազմակերպած են խմբային ցուցահանդէս մը, որուն բացումը տեղի ունեցաւ 30 Մայիսի երեկոյ-

եան ժամը 6:30ին, Պէյ-րուսի Ընկերային Զարգացման Հաստատութեան ցուցասրահին մէջ (ժամմէյքի): Առաջինը՝ Իրա Պալթայեան իր մասնագիտական կրթութիւնը ստացած է Փարիզի եւ ապա Պէյրուսի մէջ, իսկ միւսները՝ Մարիա Պոյաձեանն ու Շահէ Տէր Յարութիւնեանը ուսած են Երեւանի մէջ: Իրա Պալթայեան առաւելաբար կը պատկերէ, մենաւոր տուներ, որոնց դիմաց կամ կողքին յաճախ կ'երեւին սպիտակ կերպարներ, որոնք մենակուրծներ են կեանքի ժխտելի հեռանալու զգացողութիւնը կը փոխանցեն ակնդիրին: Մենաւոր եւ սպիտակ կերպարները երբեմն կ'երեւին նաեւ երկրորդական մեկնադրութեամբ ու մեկնադրութեամբ կողմէն կողմէն, մէկ կողմէ իրեն հակադրութիւն, իսկ միւս կողմէ՝ հաւանաբար իրեն հերքող:...

Մարիա Պոյաձեանը հաւասարապէս կը պատկերէ դիմանկարներ, անհատական ընկերակցութիւններ եւ ընկերակցութիւններ, որոնք բոլորն ալ իրագործուած կը թուին ըլլալ ամուր ու ինքնավստահ գեղանկարչուհի մը կողմէ: Իրապաշտութիւնը Մարիա Պոյաձեանին համար

միջոց է խորանալու եւ կարելի չափով արտայայտել զարձնելու իր ստեղծագործութիւնները նոր ժամանակներու վրայ: Անոր հոգեմտաւոր պրիսմակը երկնքնային է ու զգայուն: Շահէ Տէր Յարութիւնեանի արուեստը թէեւ թափառու է երաժշտականութեամբ, սակայն անոր ստեղծագործութիւններուն կը յղուի պայմանաւորուած չէ գոյնի եւ դիմի խաղերով, այլ նախաւորապէս կը զբաղուի հոգեպարար լուսերանգներով եւ ապա կը բխի աններգաշնակ նեխարարի մը «ներդաշնակուած» յոյզերէն: Կիսավերացական բնույթը շփոթի չ'առաջնորդէր ակնդիրը, այլ միաձուլուելով թաւաշային շողերով ողորդուած լուսերանգներու հետ՝ հարազատ եւ անմիջական «մտերմութիւն» մը կը ստեղծէ ակնդիրին եւ ստեղծագործութեան միջեւ: Շահէ Տէր Յարութիւնեան իր արուեստով ներդաշնակութիւն կ'որոնէ գերիբազաւոր ոլորտներու մէջ:

Ան, ինչպէս նաեւ իր գոյգ վրձնակիցները այսօր կը գտնուին ստեղծագործական ճիշդ ճանապարհի վրայ:

ՕՓՈՐՏԻ ՎԱՐՊԵՏ՝ ԱՇՈՏ ՄԱՄԱՋԱՆԵԱՆ

Վաստակաւոր նկարիչ Աշոտ Մամաջանեանի ստեղծագործական դիպուկոն ընդգրկուած է գծագրական արուեստի ողջ բազմազանութիւնը: Նա միատեսակ յաջողութեամբ է աշխատում հաստոցային եւ կիրառական գծագրութեան, գրքերի նկարագրման եւ գեղարուեստական ձեւաւորման բնագաւառում: Աւելի քան 45ամեայ գործունէութեան ընթացքում նա ստեղծել է մեր իրականութիւնը, ինչպէս նաեւ՝ պատմական անցեալը պատկերող համարակաւ մի ամբողջ շարք գործեր: Արուեստագէտը մեծ ուշադրութիւն է դարձնում նաեւ բնանկարչութեանը:

Փորագրական մենատիպ արուեստի ծիրէն ներս օֆորտը ամենեւնի տարածուած է ժողովրդականացած տեսակն է, յատկապէս՝ նկարագրողական ստեղծագործութիւններու վարպետը: Հայրենի գծագրական արուեստին մէջ ունեցած ենք փայլուն դէմքեր, սկսեալ Յակոբ Կոչոյեանէն ու Վառձապուի Շաքարեանէն մինչեւ Ռուտուֆ Խաչատրեանն ու Վիդուի Թադևոսեանը: Այս բոլորին մէջ իրեն օֆորտի վարպետ է մեծ վաստակի տրե գեղանկարիչ՝ կ'առանձնանայ Աշոտ Մամաջանեանը, որուն ստեղծագործական կեանքին մասին ընդհանուր գաղափար մը կու տայ ստորեւ տրուած ակնարկը:



«Չիախաղը» (օֆորտ քուլթի վրայ), գործ՝ Աշոտ Մամաջանեանի:

Ա. Մամաջանեանի ստեղծագործութիւնը սերտորէն կապուած է հարազատ ժողովրդի կեանքի, արդիականութեան յուզիչ իրադարձութիւնների, գործունէութեան շատ ոլորտներում մարդկանց ձեռք բերած աշխատանքային նուաճումների հետ: Նկարիչը չընկնէ մեր հանրապետութիւնում, եղել է մեր հայրենիքի շատ մարգերում ու երկրամասերում, պրպտուել կերպով ուսումնասիրել է կեանքը:

Դեռեւս ոչ հեռու անցելու հաստոցային գրաֆիկան մեզանում այդպիսի բազմակողմանի զարգացում չէր ստացել, ինչպէս վերջին երկու տասնամեակներում: Այսօր արդէն նկարիչների մի մեծ ջոկատ զբաղուած է գրաֆիկայի բոլոր տեսակներով, այդ թւում նաեւ հաստոցայինով: Հայ գրաֆիկայի կազմաւորման ու զարգացման գործում փոքր չէ Ա. Մամաջանեանի՝ այդ բնագաւառի յառաջապահներէն մէկի աւանդը:

Մամաջանեանի աշխատանքներում կարելի է գտնել հաստոցային գրաֆիկայի ողջ բազմազանութիւնը եւ արհեստագիտական տարատեսակները՝ օֆորտ (փափուկ լաթ, չոր ասեղ, ակվատինտա, ռեզերվաժ), վիմագրութիւն, գունաւոր փորագրութիւն փայտի վրայ, լինոփորագրութիւն, հեղինակային ցինկոգրաֆիա, մենատիպ եւ այլն, որոնց նա տիրապետում է ազատ ու հմտորէն:

«Հին Երեւանը» գունաւոր լինոփորագրութեան մէջ, օգտագործելով 5 տախտակ, նա ստեղծել է 40ական թուականներ յիշուող Երեւանի մի արտայայտիչ անկիւն: Այդ աշխատանքը, անկասկած, փորագրութեան թեքնիք բնագաւառում նկարչի մեծ յաջողութիւններից է:

«Սեւանի ափին» եւ «Հին Աշտարակը» բնանկարներում, օգտագործելով էստամպի երեք տեսակներ՝ առաջինում երկայնակի գունաւոր փորագրութիւն փայտի վրայ, երկրորդում լինոփորագրութիւն եւ երրորդում օֆորտ, նա կարողացել է երեք դէպքում էլ արհեստագիտական միջոցները օրգանապէս գուգակըցել գեղարուեստական խնդրի հետ:

Մամաջանեանը բեղմնաւոր է աշխատում օֆորտի եւ մենատպութեան արհեստագիտութեան բնագաւառում: Նրա «Բերրահաւաք», «Մեծամարտ» եւ «Նեւտաձիգը» մենատպութիւններն աչքի են ընկնում կատարողական արհեստագիտութեան թարմութեամբ եւ, որ յատկապէս բնորոշ է մենատպութեան համար, ստեղծագործական լուծումների մեծ բազմազանութեամբ գոյնաբծերի յազգեղանութեամբ եւ ընդհանրացմամբ:

Ստեղծագործական ուղու հէնց սկզբից նկարիչը հանդէս է գալիս նաեւ որպէս գրքերի նկարագրող:



«Սեղրի» (օֆորտ քուլթի վրայ), գործ՝ Աշոտ Մամաջանեանի:

Պորագրական մենատիպ արուեստի ծիրէն ներս օֆորտը ամենեւնի տարածուած է ժողովրդականացած տեսակն է, յատկապէս՝ նկարագրողական ստեղծագործութիւններու վարպետը: Հայրենի գծագրական արուեստին մէջ ունեցած ենք փայլուն դէմքեր, սկսեալ Յակոբ Կոչոյեանէն ու Վառձապուի Շաքարեանէն մինչեւ Ռուտուֆ Խաչատրեանն ու Վիդուի Թադևոսեանը: Այս բոլորին մէջ իրեն օֆորտի վարպետ է մեծ վաստակի տրե գեղանկարիչ՝ կ'առանձնանայ Աշոտ Մամաջանեանը, որուն ստեղծագործական կեանքին մասին ընդհանուր գաղափար մը կու տայ ստորեւ տրուած ակնարկը:

Մասնաւորապէս կարելի է յիշատակել նրա նկարագրողական եւ ձեւաւորած հետեւեալ գրքերը, ինչպէս՝ Ապրիլ «Հատընտիրը», Ղ. Աղայեանի «Հատընտիր հեքիաթները», Յովհ. Թումանեանի յորելու նախադասութիւնները եւ «Հեքիաթները», Պարոյր Սեւակի բանաստեղծութիւնների հատընտիրը եւ ուսերէն շատ այլ հրատարակութիւններ: Նկարիչը ստեղծում է նաեւ գրական կերպարներին նուիրուած առանձին էստամպաթերթեր: Այս աշխատանքով ուշագրաւ է այն, որ նկարիչը կարողանում է գրաֆիկայի արտայայտչական ուժով նպաստել ոչ միայն գրական գործի գաղափարական-գեղագիտական, այլեւ դրա ժանրային-ոճական եւ ազգային առանձնայատկութիւնների բացայայտմանը:

Ղ. Աղայեանի «Հագարան բլրով» հեքիաթի նկարագրողականներում նկատուած են հայկական ազգային ոճի գծեր: Նկարիչը նուրբ երանգներով եւ սեւ գծերով, մի փոքր ոճականացնելով, կարողանում է հաղորդել յորինուածքի հեքիաթայնութիւնը: Յովհ. Թումանեանի «Ձարի վերջը» հեքիաթի համար ստեղծուած լինոփորագրութիւններում նա հմտորէն օգտագործում է փորագրութեան հիւթեղ գծերի բովանդակ հմայքը:

Դեռեւս 1939 թուականին նկարիչը առաջին անգամ դիմեց «Սասունցի Դաւիթ» վիպերգին եւ ստեղծեց հայկական այդ հիանալի վիպերգութեան զլխաւոր հերոսի ու շատ ուրիշ գործող անձանց հետաքրքիր կերպարները: Հուսալ եւ նուրբ կոլորիտը, գոյնաբծերի ընդհանրացուածութիւնը նկարագրող մանր հաղորդել են իւրօրինակ յարգարաշինութիւն:

Ժողովրդական վիպերգը մինչեւ օրս էլ նկարչի ստեղծագործական խանդավառութեան ակունքն է: Նկարիչը բազմակերպար համարումներում իրապաշտօրէն պատկերում է իր մտայնացումը, վիպերգի ըմբռնումը՝ դիմելով ժամանակակից կերպարուեստի միջոցներին, միաժամանակ չկտրուելով հայկական ազգային արուեստի արմատներից ու աւանդոյթներից:

Վերջին տարիներու Մամաջանեանը յաջողութեամբ օգտագործելով բազմազան արհեստագիտութիւն՝ մեծ կոմպոզիցիոն թեքնիքներով ստեղծել է «Սասունցի Դաւիթ» ժողովրդական վիպերգի գործող անձանց մի ամբողջ նկարագրանք:

Նկարիչը շատ գործեր է ստեղծել պատմական թեմաներով: «Վարդան Մամիկոնեան» մեծ վիմագրութիւնը բազմափուլ կոմպոզիցիա է, որ պատկերում է Աւարայրի ճակատամարտը: Հետաքրքիր են նաեւ «Հայկական կենդանակերպի նշանները» վիմագրութիւնները:

Ա. Մամաջանեանը շատ բեղմնաւոր աշխատեց Երեւանի 2750ամեակի տօնակատարութեան օրերին: Նա յորեկանական ցուցահանդէս ներկայացրեց «Երեւան - Երբեմուեւ» հնագոյն պատմութեան զրուակների թեմաներով բազմաթիւ գունաւոր մենատպութիւններ: Կոմպոզիցիոն տեսակէտից յաջող եւ պոլիգրաֆիայի իմաստով գրագէտ է հրեւոյնու յորելուական նուրբ - օրացոյցը, իսկ «Արգիշտի թագաւորը», «Արքունական ելք» «Շրակառքում», «Թագաւորութեանը ուշագրաւ եւ կատարման թարմութեամբ, հետաքրքիր կոմպոզիցիոն մեկնաբանութեամբ եւ կոլորիտով:

Ա. Մամաջանեանն արգասաւոր աշխատանք է կատարել որմազդի բնագաւառում:

Հայրենական մեծ պատերազմի տարիներին հայրենասիրութեան վեհ զգացումի մղումով նա յատկապէս շատ աշխատեց քաղաքական որմազդի ու ծաղրանկարների վրայ:

Թեքնիքով այդ տարիների կատալոգները, մենք կը հանդիպենք բազմաթիւ որմազդների ու ծաղրանկարների, որոնցում հեղինակը կծու ծաղրում եւ սուր խրատական է ատելի թշնամու, մերկացնում նրա հրէշաւոր դէմքը: Այդ գործերից են՝ «Նրա համար պատերազմն աւարտուել է», «Մեռեալ գլուխ»: «Գազանների դպրոցում», եւ այլն:

Իր բովանդակ ստեղծագործական գործունէութեան ընթացքում Մամաջանեանը, հետեւելով իր ստեղծչի՝ ականաւոր նկարիչ Յակոբ Կոչոյեանի

ՊԵՅՐՈՒԹԻ ՖՐԱՆՍԱԿԱՆ ՄԵԱԿՈՅԹԻ ԿԵՂՈՒՆԻ ՄԵՋ ՀՈՒՏԻԹ ՓՐԻՎԷՏԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ԶՈՒՅԱՀԱՆԴԵՍԸ

Յատկապէս պատերազմին ետք, վերջին տասնամեակին, Պէյրուսի Ֆրանսական Մշակութի կեդրոնը շինիչ աշխուժութիւն կը ցուցաբերէ՝ կազմակերպելով մշակութային գանազան ձեռնարկներ: Այս մէկը ոչ միայն արեւմտեան մշակութիւն հաղորդակից կը դարձնէ Լիբանանի արուեստասէր հասարակութիւնը, այլեւ՝ կը նպաստէ երկրի արուեստի զարգացման ու տարածման:



«Երոպայի առեւանգումը», գործ՝ Դուսիթ Փրիվէտի:

Եւ ինչպէս նաեւ իր գոյգ վրձնակիցները այսօր կը գտնուին ստեղծագործական ճիշդ ճանապարհի վրայ:

STUDIO **Lantern**
• Կը ստանձնէ ուրախ առիթներու video
Գկարկանումներ
Հեռ. 01-266866
Ել 03-695399

Հայաստանի Ժողովուրդ

ԿԱԼԷՍԵՐԻՆԻ ՇԵՇՏՈՒԱԾ ՎԵՐԱԴԱՐՁ

ԿԱԼԷՍԻ ԵՐԿՍԱՍԱՐԴՆԵՐԸ ԵՐԵՅ ՍԵՐՈՒՆԴԵՐ ԱՄԵԼԻ ԿԸ ՏԻՐԱՊԵՏԵՆ ԻՐԵՆՑ ՍԱՅՐԵՆԻՆՆԻՆ՝ ՇՆՈՐՀՈՒ ԻՐԵՆՑ ԿՃՈՂԱԿԱՆՈՒԹԵԱՆ, ԻՆՉՊԵՍ ԿԸ ՇԱՍՍԱՏ «ՈՒԱՃԻՆԿԹԵՆ ՓՈՍԹ ԱՆՐԱԿՈՒՄ»-Ի ՄԵԿ ՅՈՂՈՒԹԵԸ

Կալէսի հիւսիսային գիւղերէն մէկուն անունը այնքան երկար է, որ երկաթուղիի ընկերութիւնը բնական չափէն աւելի մեծ տոմսեր տպագրած է գայն արձանագրելու համար: Սակայն ասիկա ամէնէն աներեւակայնի բանը չէ գիւղի մէջ, Ամէնէն յատկանշականը այն է, որ շուրջ 3400 մարդիկ անխոր կրնան ճշգրիտ կերպով արտասանել իրենց գիւղին 58 տառերէ բաղկացած անունը՝ անոր հազագային հնչիւններու ամբողջ փառքով: Դպրոցներու մէջ կիրարկուող լեզուական յատուկ ծրագիրի մը շնորհիւ Կալէսի բնակչութեան աւելի քան 80 առ հարիւրը կրնայ արտասանել գիւղին անունը:

Իրօք, այն օրէն, երբ Կալէսերէնը պարտադիր նիւթ դարձաւ Կալէսի բոլոր դպրոցներուն մէջ, աշակերտներ Բրիտանիոյ այս շրջանին ամէնէն հռչակաւոր գիւղին անունը կ'արտասանեն ամենայն գիւղութեամբ: Գիւղին անունին հազագային բաղաձայնները եւ սուրբ հնչիւնները միասնաբար կը ստեղծեն գամբուր դէպ մը մաքրող փոշածոյն մեքենայի տպաւորութիւնը:

Դասարանի մը մէջ հպարտօրէն այս վանողական ձայնը հանող մանուկներուն պատկերը կենդանի վկայութիւնն է մեռնող լեզու մը վերակենդանացնելու ամէնէն յաջող ճիգերուն:

